ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 15, 29.04.10թ.

| | |
|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,072,401 հատ, 25,000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ |

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| Գարիկ Ադամյան | Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ | | 29.04.2010 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Արթուր Մելիքյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 29.04.2010 |
| Տիգրան Գալստյան | Գլխավոր հաշվապահ-վարչության անդամ | | 29.04.2010 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | | 29.04.10 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
АРАРАТБАНК
ARARATBANK
02500518

29 ապրիլի 2010 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

29 ապրիլի 2010թ.

ՈՐՈՇՈՒՄ 12/01
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության

բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի $21^{6}$-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի

խորհուրդը որոշեց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2009 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2010 թվականի մայիսի 31-ին ժամը $12^{\underline{00}}$-ին՝ ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոց, դահլիճ Տիգրան Մեծ:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2009 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2010 թվականի ապրիլի 29-ը:

3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2009 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման հաշվետվությունը (կցվում է):

4. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2009 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը (կցվում է):

5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2009 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:

6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը (կցվում է):

7. Սահմանել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցուցակում ընդգրկված նյութերին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերը կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև բանկի պաշտոնական կայքում (www.araratbank.am):

8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը (կցվում են):

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Ք. Բեգլարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի*

1. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2009 թվականի գործունեության հաշվետվության հաստատումը:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման հաստատումը:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 19.04.2010թ. արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփում:
5. Տեղաբաշխումը կայացած լինելու դեպքում՝ կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված, փոփոխված կանոնադրության հաստատում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին*

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Պուշկինի 19) 2010 թվականի մայիսի 31-ին ժամը 12:00-ին ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոց՝ դահլիճ Տիգրան Մեծ, հրավիրում է բաժնետերերի 2009 թվականի տարեկան ընդհանուր ժողով:

Սույնով հայտնում ենք, որ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2010 թվականի ապրիլի 29-ին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Հայտնում ենք, որ ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պաշտոնական կայքում (www.araratbank.am)՝ սկսած 2010 թվականի ապրիլի 30-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ:

Ժողովի օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերին վերաբերող նյութերը (տեղաբաշխման պայմանները և կանոնադրության փոփոխությունը) կներկայացվեն ժողովի ընթացքում:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում նաև ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը, որը լրացվում և ներկայացվում կամ ուղղարկվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ՝ ք. Երևան, Պուշկինի 19 հասցեով:

Հարգանքով

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ

Աշոտ Օսիպյան

նախագիծ

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2009 թվականի շահույթի բաշխումը.*

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն 2009 թվականի հաշվեկշռային շահույթը կազմել է 337,816,929 (երեք հարյուր երեսունյոթ միլիոն ութ հարյուր տասնվեց հազար ինը հարյուր քսանինը) ՀՀ դրամ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի շահույթն առաջարկվում է բաշխել հետևյալ տեսքով.

- 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամն ուղղել պահուստային հիմնադրամի համալրմանը:
- շահույթի մնացած մասը որպես չբաշխված շահույթ թողնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տրամադրության տակ:

*ՑՈՒՑԱԿ*

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի*

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2009 թվականի գործունեություն արդյունքները:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2009 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2009 թվականի շահույթի բաշխման առաջարկ: